№ 272 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8 1901 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8 № 272

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(30-ՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱԾ **1902** ԹՒԱԿԱՆԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ
ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսվանը՝ 9 բ., ինն եւ ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ. եւ մէկ ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ճգնաժամի շրջանում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Շամախուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՃԳՆԱԺԱՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Այսօր, դեկտեմբերի 8-ին, Բագուում բացվում է նաւթագործական ժողովը քննելու հերթական մի շարք հարցեր։ Ներկայ ժողովը տեղի ունի մի այնպիսի ժամանակ։ երբ նաւթագործական աշխարհը գտնվում է ծանր դրութեան մէջ։ Շատ նաւթագործարաններ և նաւթագործութեան հետ կապված ձեռնարկութիւններ կամ բոլորովին դադարեցրել են իրանց գործունէութիւնը և. կամ շատ թոյլ կերպով են նրան արտայայտում։ Անգործ են մնացել բազմաթիւ վարպետներ և աշխատաւորներ, թուլացել է ընդհանուր առևտուրը, սահմանափակվել է բանկերում կրեդիտը և ամեն օր սպասվում են նորանոր սնանկութիւններ և դժբաղդութիւններ։

Բացատրել ներկայ ճգնաժամը միայն մի քանի խոշոր ֆիրմաների չար դիտաւորութեամբ և նրանց մեքենայալարութիւններով—սխալ է։ Երևոյթը աւելի խոր և ընդարձակ ազդեցութիւնների արդասիք է։ Միայն այն կայ, որ խոշոր ֆիրմաները, որոնք անմիջական կապեր ունէին արտաահմանեան վաճառանոցի հետ և ուրեմն կարող էին նախկին աջողակ գներով ծախել իրանց նաւթը վաճառանոցում, ոչ միայն չը վնասվեցին ներկայ տագնապից, այլ և ունեցան որոշ օգուտներ, ձեռք բերելով մի տեսակ մենավաճառութիւն Բագուի շրջանում։ Մեծ ֆիրմաները, ինչպէս, օրինակ, Նոբելի և Ռոտշիլդի ֆիրմաները, ընդունակ դարձան առանց նոր նաւթահորեր փորելու ստանալ իրանց ցանկացածի չափ նաւթ էժան գնով։ Այդ ֆիրմաները, որքան նաւթ ուզենան, կարող են ներկայումս գնել Բագուի շրջանում 5—7 կոպէկով և ծախել մի քանի կոպէկ աւելորդով հեռաւոր վաճառանոցներում և այդպիսով պահպանել իրանց այն էլ ամուր դիրքը։

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, նաւթ ագործների մի մասը դիմել էր մինիստրութեան խնդրելով, որ նաւթի վրա դրված հարկը վերցվի ոչ թէ փողով, այլ նաւթով։ Մինիստրութիւնը, ինչպէս ասում են, անկարելի է համարել յարգելու այդ խնդիրքը։ Դրական կերպով դեռ յայտնի չէ մինիստրութեան տեսակէտը այդ հարցում և նոյնպէս անյայտ է, թէ արդեօք մտադիր է նա որ և է կերպով օգնելու նաւթագործներին, թէ ոչ։ Որպէս զի մինիստրութիւնը կարող լինէր որ և է փոփոխութիւն մտցնել նաւթագործների կապալների վերաբերութեամբ, պէտք է նա իր ձեռքին ունենար մի լուրջ ծրագիր, մի մշակված զեկուցում. մինչդեռ խնդիրք տուող նաւթագործները այդպիսի մի աշխատութիւն չը ներկայացրին և յոյս դրեցին միայն մինիստրութեան վրա, որը և պէտք է գտնէր աջող ելք ներկայ դժուար դրութիւնից։

Մենք համաձայն չենք նաւթագործների մի ուրիշ խմբի բռնած դիրքին, որը հանդէս է եկել մի հակախնդիրքով մինիստրութեան անունով նաւթաբաժնի հարկատուութեան դէմ։ Նաւթագործների այդ խումբը համոզում է մինիստրութեանը չը զիջել առաջին խնդրատուներին և չը փոխել նաւթահարկի ձևը, առարկելով թէ այն ժամանակ դադարած նաւթահորերը կը սկսեն գործել, նորից արտահանել մեծ քանակութեամբ նաւթ և դրանով աւելի ևս գցել նաւթի գինը և դարձնել նաւթագործութիւնը վնասաբեր նաև այն մարդկանց համար, որոնք այժմ դեռ մի կերպ դիմանում են և իսպառ չեն քանդվում։ Ճիշդ է, որ նաւթի գինը կընկնի, եթէ արտահանվող նաւթի քանակութիւնը աւելանայ։ Նորերս երևացած մի երկու շատրվանները ակներև կերպով ցոյց տուին, որ նրանց երևալով նաւթի գինը ընկաւ։ Այդ ճիշդ է։ Բայց սխալ է այն, որ կառավարութիւնը, կապալով տալով իր հողերը, ցանկացել է ինքն էլ օգտվել և նաւթագործին էլ օգուտ տալ։ Եւ երբ նա նկատում է, որ վերցրած կապալից մեծ վնասներ են հասնում նաւթագործին արտաքին, նաւթագործից անկախ, պատճառների շնորհիւ, նա պէտք է անպատճառ օգնութեան գայ նաւթագործներին։

Մենք չենք պնդում, որ նա քանդէ իր պայմանագրութեան կէտերը, բայց կարելի ենք համարում, որ նա տայ մի շարք արտօնութիւններ ազատելու նրանց գոնէ վնասներից, մինչև որ նաւթի գինը հնարաւորութիւն տայ նորից շարունակելու գործը առաջվայ եղանակով։ Կառավարութիւնը կարող է յետաձգել իր պահանջները և արտօնութիւն տալ մարդկանց նորանոր ծախքերի մէջ չընկնելու, որոնք միայն վնասել կարող են նրանց։

Իսկ եթէ կառավարութիւնը անկարելի համարէ այդպիսի արտօնութիւն տալը, այն ժամանակ ամեն բան թողված կը լինի բաղդի հաճոյքին և անկասկած շատերը չեն դիմանայ զոհերին և յետ կը քաշվեն ասպարէզից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

LXII

Վաղուց յայտնի է, որ հայերս ընդունակ չենք, բոլորս մի սիրտ, մի հոգի դարձած, համակվել մի ընդհանուր, համազգային զգացմունքով։

Վաղուց յայտնի է եւ այն, որ այդ անընդունակութեան մէջ է մեր բոլոր թշուառութիւնների, մեր ամբողջ ողորմելիութեան սկզբնապատճառը։

Ալիշանի մահը մի անգամ եւս ապացուցեց մեր այդ անընդունակութիւնը, մի անգամ էլ ապացուցեց, որ դեռ երկար ժամանակ մենք հնալու ենք ողորմելի, գծուծ, փոգրոգի ազգ։

Մեռաւ Ալիշան, մի մարդ, որի երկարատեւ կեանքը մի անընդհատ անձնուէր ծառայութիւն էր իր թշուառ հայրենիքի օգտին, մի մարդ, որի նման երկուսը չեն ծնվում մի դարում, մանաւանդ մեր նման փոքր ու խեղճիկ ազգի մէջ, եւ ահա մեր հոգեւորականութեան այն մասը, որ ղեկավարիչ դեր է կատարում այժմ մեր ներքին գործերում, ոչինչ չը գտաւ ասելու այդ առիթով մեր ազգին, քան այն, որ մեր եկեղեցում չէ կարելի հանգիստ մաղթել Ալիշանի հոգու, որովհետեւ Ալիշան կաթոլիկ էր։

Մեռաւ Ալիշան, որ հայ էր ոտքից մինչեւ գլուխ, եւ մի Գարեգին վարդապետ Յովսէփեան, որ հանգամանքների բերմամբ ստացել է Թիֆլիսի հայ հոգեւոր վարչութեան նախագահի պատասխանատու պաշտօնը, արգելեց յարգել նրա յիշատակը հայոց եկեղեցում, այն եկեղեցում, որ իր շէն եւ համակրելի ժողովրդական սկզբունքներով թոյլ է տալիս հոգեհանգիստ կատարել նոյն իսկ պարսից Շահի համար, եւ ուր մեր հոգեւոր հայրերը յաճախ աղաթանք են կատարում Թիւրքաց սուլթանի արեւշատութեան համար։

Թիւրքաց սուլթանի համար կարելի է աղօթել մեր եկեղեցում, բայց Ալիշանի համար՝ ոչ,—ահա թէ ինչ է սովորեցնում մեզ մեր աստուածաբանների ներկայացուցիչ Գարեգին վարդապետ Յովսէփեանը։ Եւ չը գտնվեց մի հեղինակաւոր անձնաւորութիւն, որ ասէր այդ աստուածաբանին, թէ ամօթ է վերջապէս, թէ խայտառակութիւն է այդպիսի հարցեր զարթեցնել Ալիշանի մահի առիթով, որի առաջ լուռ ու մունջ պէտք է խոնարհվէին բոլոր գլուխները, նոյն իսկ ամենադատարկները, նոյն իսկ միջնադարեան տգիտութիւններով լցվածները։ Եւ չը գտնվեց մէկը Էջմիածնի խորհրդատուների մէջ, որ հասկացնէր, թէ նոյն իսկ կղերական դասակարգի չահերի տեսակէտից, անտակտութիւն է Գարեգին վարդապետի արածը։ Չը գտնվեց մէկը, որ խորհուրդ տար ասել աւելի յարմար առիթի այդ հարցը բարձրացնելու համար, որովհետեւ ոչ մի խելացի հայ կղերական չը պէտք է ուրախանայ, երբ տեսնի, որ իր հօտը իր ամենանուիրական զգացմունքները արտայայտելու համար գնում է կաթոլիկ եկեղեցի։

Չը գիտեմ ինչպէս են վերաբերվում այս հարցին կաթոլիկները, բայց եթէ նա կաթոլիկ լինէի, անպատճառ կառաջարկէի ուղերձ մատուցանել Գարեգին վարդապետին, իբրեւ մի ուղեցոյցի, որ իր հօտին ցոյց է տալիս կաթոլիկ եկեղեցու ճանապարհը։

Մի ուրիշ տեսակէտից էլ աշխի ծառայութիւն է մատուցանում հայոց եկեղեցուն Գարեգին վարդապետը։ Միմիայն զուտ կրօնական տեսակէտից կարող է ցանկալի լինել, որ ժողովրդի յարգանքը դէպի հատարակական գործիչների յիշատակը արտայայտվի հոգեհանգիստներով, եւ ով որ ժողովրդին սառեցնում է հոգեհանգիստներից, մի այնպիսի գործ է կատարում, որ կարող է գովելի համարվել միմիայն հակակրօնական ուղղութեան տեսակէտից։

Ինչ վերաբերում է մեզ, մեզ համար ամենից ցաւալին այս հարցում այն է, որ մի անգամ էլ ապացուցվեց, որ մենք անընդունակ ենք ամբողջ ազգով զգացվել երբեւ մի մարդ։

Տ. Ճ.

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Նոյեմբերի 20-ին

Անցեալ շաբաթ վերջացան Կայսերական-Զինուորական Բժշկական Ակադէմիայի քննութիւնները։ Ընդամենը այս տարի աւարտեցին 146 հոգի, որոնց թուում 4-ը հայ երիտասարդներ են. Աղաջանեանց, Արզումանեանց, Ղորղանեանց եւ Թէրզեան։

Ակադէմիական կանոնադրութեան համաձայն՝ աւարտողներից ամեն տարի տասը հոգի թողնվում են Ակադէմիայում կատարելագործվելու եւ ապագայում պրոֆէսորական պաշտօն վարելու համար։ Այդ նպատակով, ընդհանուր քննութիւնները վերջացնելուց յետոյ, ակադեմիական վարչութիւնը առաջարկում է առաջնակարգ աւարտողներին (cum eximia laude) մրցողական քննութիւն, եւ մրցողներից ընտրում է տասը ալ ժանաւորագոյններին։ Հայերից այս տարի մրցողական քննութիւններին մասնակցեցին երկու հոգի, որոնցից Կարապետ Աղաջանեանցը, իբրեւ ամենաարժանաւորներից մէկը՝ պրոֆէսորների համարեա միաձայն որոշմամբ թողնվեց Ակադէմիայում։

Պրոֆէսոր թողնվածից յետոյ, որքան յիշում ենք, այս առաջին օրինակն է, որ հայ նորաւարտ երիտասարդը հրաւիրվում է գիտական ասպարէզ մտնելու, ուստի աւելորդ չենք համարում պարոնի մասին մի քանի տեղեկութիւններ հաղորդել։

Պ. Կարապետ Աղաջանեանցը Թիֆլիսեցի քահանայի որդի է։ Միջնակարգ ուսում ստացել է Թիֆլիսի գիմնազիայում, որտեղ աջող աւարտելուց յետոյ, մտել է բժշկական Ակադէմիա։ Այստեղ նա հէնց առաջին դասընթացքում՝ իր լուրջ եւ խոհեմ վերաբերմունքով՝ իր վրա է դարձրել թէ պրոֆէսորների եւ թէ ընկեր-ուսանողների ուշադրութիւնը։ Պարոնը մեծ եռանդով պարապել է գլխաւորապէս զուտ թէօրետիկ գիտութիւններով եւ առանձնապէս ուսումնասիրել է հոգեկան եւ ջղային հիւանդութիւնները։

Ինչպէս լսում ենք, պ. Աղաջանեանցին առաջարկել են կանանց բժշկական ճեմարանում պրոֆէսորի օգնականի պաշտօն։

Իրբեւ ընկեր՝ պ. Աղաջանեանը յայտնի է իր բարեսիրտ վարմունքով թէ ռուս եւ թէ հայ ուսանողական շրջաններում։ Ինչպէս խելացի եւ գործունեայ երիտասարդ, պարոնը կատարել է կուրսական տարօտայի եւ այլ պաշտօններ։

Պ. Աղաջանեանի մի յատկութիւնն էլ այն է, որ նա հոգւով, սրտով ու կրթութեամբ հայ է։ Ամբողջապէս նուիրված լինելով իր գիտական պարապմունքներին՝ պարոնը, յատենայն դէպս, երբէք չէր մոռանում հետաքրքրվել իր մայրենի լեզուով, գրականութեամբ, պատմութեամբ եւ այլն։ Այս յատկութիւնը մենք առանձնապէս շեշտում ենք, որովհետեւ դա շատ հազուագիւտ երեւոյթ է մեր ուսանող երիտասարդութեան մէջ, որի յատկանիշն է անտես անել սեփականը եւ կիսատ-պռատ գիտենալ օտարինը...

Վերջացնելով մեր նամակը, չենք կարող չը

յայտնել մեր շնորհակալութիւնը պ. Մանթաշեանին, որի հաշուով ստացել է իր ուսումը պ. Աղաջանեանը եւ որի շնորհիւ մի նոր հայ անուն է հանդէս գալիս գիտական ասպարէզում։

Հաւատացած ենք, որ պ. Աղաջանեանցը կարդարացնէ իր վրա դրած յոյսը։

Ուսանող բժ. Ակադէմիայի՝ Կ. Ղափանցեան

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Նոյեմբերի 20-ին

Վաղուց էին խօսում, թէ իբր Շամախում եւ իր շրջակայքում նաւթային հանքեր կան, թէ իբր այստեղի երկրաչարժները հետեւանք են նրա ստորերկրեայ թաղնված ոյժի եւ թէ իբր վերջին տասնեակ տարիների ընթացքում Բագուի Ժէկը միւսի ետեւից խփող նաւթային շատրուաններով պիտի բացատրել այն հանգամանքը, որ հէնց նոյն ժամանակներից սկսած, այստեղ այլ եւս չեն կրկնվում այն ատէպ երկրաշարժները, որ լինում էին առաջ, եւ թէ մինչեւ անգամ Բագուի նաւթը այստեղից է գնում ու ծովին դէմ առնում, որպէս ժէկը միւսին չը խառնվող նիւթեր։

Այս բոլորի մէջ գուցէ եւ կայ ճշմարտութիւն։ Նախ այն պատճառով, որ Բագուն Շամախուց այնքան է հեռու, որ այնտեղի մեծ հրդեհների լոյսն անգամ գիշերով այստեղ պարզ նկատվում է, իսկ օրանց գաւառները կից են իրարու. երկրորդ՝ որ այստեղ գեռնի երեսին բազմաթիւ նշաններ, նոյն իսկ նաւթային աղբիւրներ կան. վերջապէս այն, որ Բագուի նաւթը գնալով՝ աւելի խոր շերտերի վրա է յայտնվում, վերին շերտերի պաշարը իբրեւ երկարամեայ կուտակված նիւթ, այլ ոչ ինքնաբուղխ, սպառված համարվելով։

Մի կողմից օրանք, իսկ միւս կողմից 1890 թ.ին Բաթումի անգլիական հիւպատոս Պիկոկի իր կառավարութեան յատուկ տեղեկագրով տուած վկայութիւնը պարզում է, որ Շամախում ու նրա գաւառի Ալեաթ կոչված տեղում նաւթային ընդարձակ տեղեր կան։ («Մշակ» 1890 թիւ № 54)։

Եւ եթէ ուշադրութեան առնենք պրոֆէսոր Մենդելէեւի դեռ 1883 թէ 1884 թ.ին Բագուում նաւթի մասին ունեցած դատաստանը այն դէպը, որով այն միտքն էր յայտնել, թէ Բագուի նաւթը ստացվում է շրջակայ լեռնաշղթաներից, կը տեսնենք, որ վերոգրեալ կասկածելի երեւացած կարծիքներն էլ ունեն որոշ չափով հիմունք լուսաբանող կողմեր։

Որովհետեւ Բագուն իր փոքրիկ գաւառով առհասարակ լեռնոտ երկիր չէ եւ նրա ամենամօտ լեռները հեռաւորվում են Շամախու «Գարբասան» գաւառամասի սարերը, որտեղ էլ հէնց գտնվում են յիշեալ նաւթային նշանները եւ աղբիւրները, ուստի հիմք ունենք մտածելու, որ կամ այստեղից է անցնում նաւթը դէպի Բագուի հողերը, որտէս վերջինից մի քանի հազար փութ բարձրութիւն ունեցող երկրից, կամ անկախ օրանից, այստեղ էլ կան առանձին նաւթային հանքեր։

Այս ամառ էլ, երբ Իւրեվի համալսարանի պրոֆէսոր պ. Անդրուսեվիչ այցելել էր մեր քաղաքը, շրջեց նաեւ գաւառումս եւ հետազօտութիւններ անելուց յետոյ, շատ նպաստաւոր կարծիք յայտնեց նաւթի մասին։

Յիշեալ Գարբասանը հէնց իր անունով էլ ցոյց է տալիս, որ Նղել է հին «գարբ» կրակապաշտների գաղթատեղի, որտեղ երկրի ներսում թաղնված է եղել կրակի եւ ուրիշ այրվող նիւթերի անսպառ պաշար։ Մեր օրերով էլ այնտեղ ատէպ հրաբղխային ժայթքման դէպքեր են տեղի ունեցել, որոնցից նշանաւորներն են 1828 թ.ի Սաղեան գիւղի մօտ պատահածը եւ 1848 թ.ին Շամշադինում (քաղաքի արեւելեան կողմում) պատահածը։ Շատ տեղ էլ երկրի խորքերից վաղուց ի վեր անընդհատ լսվում է ահարկու դղրդիւն. կարծէք այնտեղ մի հսկայական կաթսայ է եռում, կամ նեղ ժայռերի միջից հոսող դեռի ձայն է լսվում։ Փորում էք այդ տեղերը, նոյն իսկ մի երկու արշին ու տեսնում հողի այն շերտը արդին սեւ նաւթի մէջ կատարեալ ծծված եւ իրանից նաւթային կաթիլներ է գոյացնում։ Կանոնաւոր այնպիսի տեղեր էլ, որոնք ստորերկրեայ բաց-կապտագոյն ժայթքումներով տիրամ են արտաւիժում եւ շուրջը բլուրներ կազմում։ Այս վերջինների կուտակումներից դարերի ընթացքում գոյացել են ահագին տարածութեամբ բարձրավանդակներ։ Տեղացիները դրանց «Ղայնաման», «Աթաշխանա» եւ այլ անուններ են տալիս։

Այս ամառ «Нов. Обозр.» լրագիրը հաղորդեց թէ Ալեաթի մօտ (Գարբասան) «Շոր-Բուլաղ» անունով տեղում փորվող նաւթահորիս 160 սաժ. խորութիւնից շատրուան է խփել. իսկ օգոստոսի 23-ի համարում տպված էին մի խումբ պետերբուրգցի ու վարչական դրամատէրերի անուններ, որոնք իրաւունք են ստացել «Ալեաթեան նաւթաղիւսարերող ակցիոներական ընկերութիւն» հաստատելու 500,000 ռուբլի դրամագլխով, Շամախու գաւառում № 43 եւ 50 հողաշաքիների վրա նաւթային հետախուզութիւններ անելու։

Այս բոլոր հանգամանքները վաղուց էր, որ դադար չէին տալիս տնտեսական ճգնաժամին հասած տեղացիներին։ Խօսում, հաւատացնում էին, թէ անկասկած այստեղ նաւթ կայ, անհրաժեշտ են միայն փորձեր անել։ Ցիշենք եւ այն, որ դեռ 1890 թ.ին տեղացիների ձեռքով, հէնց քաղաքին կից արվեց առաջին փորձը։ 30 սաժէնի վրա երեւացին բաւական վատահելի նշաններ։ Հէնց այդ ժամանակ կապալառու եւ մեխանիկ Զեյցը ինչ որ խոչընդոտներ յարուցանելով հեռանում է։ Դրանից ծագում են զանազան կասկածներ եւ գործը մնում է երեսի վրա։

Մեր քաղաքային աւագ պ. Ա. Լալայեան, գործի գլուխ անցնելով, տեղային դրամատէրերին հրաւիրում, ժողովներ է կայացնում այս առիթով. վերջապէս այս տարի կազմվում է դրանցից մի ընկերութիւն 60,000 ռուբլի դրամագլխով։ Հրաւիրում են մասնագէտներ, որոնք քաղաքապատկան հողի վրա նոր տեղ են որոշում եւ անմիջապէս սկսում են փորել։ Երեւան եւ հինգերորդ սաժէնից սկսած երեւացին եւ հետզհետէ աւելացան այն նշանները, որոնք յատուկ են նաւթատու հողերին եւ որը յայտնվում է Բագուում 150 սաժէնի վրա։ Այնուհետեւ աւելի խորը գնալով յայտնվեց Հրախառն նաւթ, իսկ վերջին օրերում երեւացած նշաններ են՝ նաւթային ուժեղ գազ, ստորերկրեայ ահարկու դղրդիւն—եւ քիչ քանակութեամբ նաւթ, այնպէս որ մի քանի օր հոսում կուտակվել էր 15 սաժէնաչափ նաւթ։ Առ այժմ փորել են մօտ 80 սաժէն։

Լարված ուշադրութեամբ սպասող ժողովրդի ուրախութեանը չափ չը կայ. ամենքի խօսակցութիւնը առօրեայ այս նորութիւններն են. գործին ծանօթ անձինք մեծ յոյսով սպասում են գործի շուտափոյթ փայլուն վախճանին։ Շատերը, նոյն իսկ ոչ տեղացիներից, հող են ձեռք բերում. հողի գինը այս երկու-երեք ամսվայ ընթացքում քառապատկվել է։ Առհասարակ քաղաքը տենդային արտասովոր շարժման մէջ է։

Նաւահի կայարանից դէպի Շամախի երկաթուղու գիծ ճիւղաւորելու բանակցութիւններ են տեղի ունենում անընդհատ. քաղաքը սպասողական դրութեան մէջ է։

Այս բոլորից յետոյ վատահանում ենք ասելու, թէ վաղուց մոռացված Շամախու հօրիզօնում վերստին կենդանութեան նշոյլներ են երեւում։

Ս. Սարգիսբէկեան

ՆԱՄԱԿ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թաւրիզ, նոյեմբերի 1-ին

Այսօր «Մշակի» № 233-ի մէջ հրատարակված Ուրմիայի թղթակցութիւնը կարդալով, բոլորովին ապշած եմ մնացել, քանի որ իմ «Գալա-Դաշտարին» ուղարկած յօդուածի նիւթը բոլորովին ասանձին մի բան է եղել։ Ուստի թախանձանօք խնդրում եմ ձեզանից՝ բարեհաճեցէք մարդասիրաբար հրատարակել հետեւեալը։

Իմ յօդուածի վերնագիրն եղել է «Մշակ» եւ յառաջաբանն եղել է «Մշակ» բառի նշանակութիւնը եւ ձեր թերթի դիրքը եւ նրա գործողութիւնները անցեալ տարիների ընթացքում։

Իսկ գալով իմ յօդուածիս, բովանդակութիւնը հետեւեալն է եղել։ Ես մի քանի նկատողութիւններ եմ արել ձեր թղթակցին նրա մի յօդուածի առիթով, որ քանի ամիս սրանից առաջ լոյս տեսաւ «Մշակում» «Բողոքականութիւն եւ կաթոլիկութիւն Ուրմիայի ասորիների մէջ» վերնագրով։

Ահա իմ յօդուածի գլխաւոր նիւթերը։

1) Զը նայելով, որ ասորիները այսօր կաթոլիկ եւ բողոքական են դարձել, բայց այնքան մեղադրելի չեն, քանի որ այսօր հայերից հազարաւոր հայ բողոքական-կաթոլիկներ կան, այնպէս որ Կ. Գոլսի հայ կաթոլիկները մինչեւ անգամ իրանց ազգային լեզուն թողած թուրքերէն են խօսում։ 2) Ուրմիայի միսիոնարութիւնները միայն աշխատել են ասորիներին դարձնել, հայերի հետ երբէք գործ չեն ունեցել. դա է պատճառը, որ Ուրմիայի հայերը ուսման կողմանէ զուրկ են մնացել եւ իրանց եկեղեցուն հաւատարիմ։ Այնպէս որ այսօր նրանք թրքախօս են, մինչեւ անգամ մի բառ հայերէն չեն իմանում։ 3) Ուրմիայի միսիոնարական ուսումնարաններում աւանդված դասերը միայն կրօնական չեն, ուրիշ շատ բարձր դասեր էլ են աւանդում նրանց մէջ։ Մի եւ նոյն ուսումնարաններում կրթութիւն առած անձնաւորութիւնները ուսման կողմից պակաս չեն Գարսկատանում ուսումն առած հայ ուսանողներից։ Միմիայն մի պակասութիւն ունեն ասորիները, որ ազգասիրական հոգին դեռ չէ գտնվում նրանց մէջ, իսկ մի բանով աւելի լաւ են, որ բարձր ուսումից առաջ եկած անատուածութեան մինչեւ անգամ նշոյլները չեն գտնվում նրանցում։

Վերջանում է իմ յօդուածն աղօթելով Աստուծուն, որ երկար կեանք տայ մեր վեհափառ Շահին, որի խնամքի ներքեւում օր ըստ օրէ ուսման դրօշակը բարձրանում է բարձր եւ աւելի բարձր։

Ցաւում եմ, որ ես պ. Թղթակցին չեմ ճանաչում, որ ես էլ նրա ինչ լինելը շարադրեմ։ Ահա ես առաջարկում եմ. կամ պէտք է այդ պարոնն ինձ դէմ արած զրպարտութիւնները հաստատէ, կամ լռելով իմանայ, որ ես այդ անիրաւ ամբաստանութիւններից ազատ եմ։ Այդ պարոնը խնդրեմ թող ուղղէ իր «Խնայները». ես մի հաւատարիմ բողոքական եմ եւ ոչ կաթոլիկ, իր ազգի արժէքն իմացող ասորի եմ եւ ոչ թէ հայ եւ իբրեւ քրիստոնեայ՝ հայերին սիրող եւ յարգող եմ եւ ոչ թշնամի, եւ էլ Աստուածաշնչի մաքուր ընդհանուր գանձապահն եմ, ոչ թէ գանձապահի օգնական։

Մ. Քարամ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հինգշաբթի, դեկտեմբերի 6-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրի անուանակոչութեան տօնի օրը, Վրաստանի էկզարխի եկեղեցում, պատարագից յետոյ, գոհաբանական ժաղթանք կատարվեց, որին ներկայ էին կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ։ Մաղթանքներ կատարվեցին նաեւ հայ-լուսաւորչականների, կաթոլիկների եւ բողոքականների եկեղեցիներում, ինչպէս հրէաների աղօթատանը եւ մահմեդականների մզկիթներում։ Քաղաքը առաւօտեանից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառված էր ճրագներով։

—

Այսօր Թիֆլիսի ըստաստանական պալատում սկսվելու է այն մեղադրական գործի քննութիւնը, որով Թիֆլիսի նախկին ուսուցչական կազմը ենթարկված է դատի՝ իր պաշտօնավարութեան ժամանակ կատարած զանազան զեղծումների պատճառով։

—

Հայկական եկեղեցիներ Մոսկվայում, ինչպէս հաղորդում է «Курьеръ» լրագիրը, տեղի կունենայ վաղը, դեկտեմբերի 9-ին, ազնուականների ժողովարանի դահլիճում։ Բացի երեկոյթը սարքող արտիստ Վլասովից, կօնցերտային բաժանմունքին կը մասնակցեն Կայսերական օպերային Թատրոնի եւ այլ յայտնի երգիչներ։

—

Մեզ հաղորդում են, որ կիրակի օր, հոկտեմբերի 2-ին, Հալաքարում պատահել է հեռաւեալ ցաւալի դէպքը։ Մի խումբ մշեցի մշակների մէջ, գինետանը խմելու ժամանակ, վէճ է ծագում. գործը հասնում է կռուի։ Նրանցից մէկը իր դաշոյնի հարուածով սպանում է իր երիտասարդ ընկերոջ։ Իսկ միւսները, շրփոթված, յարձակվում են իրար վրա եւ ծանր վէրքեր հասցնում իրար։ Մէկը սպանված է, իսկ 3-ը ծանր վիրաւորված են։ Մնացածներին ոստիկանութիւնը ձերբակալեց։

—

Գիտութիւնների Կայսերական Ակադեմիան 10 հազար ռուբլի է նշանակել միջազգային բիբլիոգրաֆիական բիւրո հիմնելու եւ պահպանելու համար։

—

Երկրաչարժութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը 25,000 ռուբլի է դրել կովկասեան իր լիազօրի արաւիժութեան տակ, որպէս զի այդ գումարի մի մասով էքսպեդիցիաներ ժողովվեն կովկասում հաստատական առաջին ցուցահանդէսի համար, որ պէտք է բացվի 1902 թուականի գարնանը Պետերբուրգում, իսկ միւս մասով ձեռք առնվեն միջոցներ տեղական տնայնագործութեան զարգացմանը նպաստելու համար։

—

Հինգշաբթի, դեկտեմբերի 6-ին, վրաց թատրոնում կայացաւ դերասանուհի տ. Գարգարէտէլիի բենեֆիսը. խաղացին Զուդէբանի «Պատիւ կոժեդիան», որի մէջ Ռօբէրտի դերը կատարեց յայտնի դերասան Վ. Ալէքսէեվ-Մեսխիեվ մեծ աջողութեամբ. ընդհանրապէս այդ գիշերվայ խաղը աջող էր, որովհետեւ անատամբլը լաւ էր։ Վերջը խաղացվեց «Փատատրանի մօտ» վոդեվիլը, բայց առաջվայ տպաւորութիւնը չը թողնց, որովհետեւ փոխադրիչը նորից էր ենթարկել այդ պիէսը փոփոխութեան, բայց անաջող։ Թատրոնում բաւական ժողովուրդ կար։

—

Կարճ ժամանակից յետոյ պէտք է միջոցներ մշակվեն՝ արտատեղերի եւ ջրաքաշութեան հարցերը մեր երկրում կանոնաւորելու համար։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Այժմ թէ լրագիրներն եւ թէ ընդհանուր խօսակցութեան առարկան՝ պուդավճարի փոխարէն բաժնէվճար առնելու հարցն է։ Եւ իրաւ, այդ հարցով կը վճռվի շատերի համար «լինել եւ չը լինելու» խնդիրը։ Եթէ կառավարութիւնը զիջանի եւ կատարէ մի քանի կապալառուների խնդիրքը. այն է պուդավճարի փոխարէն որոշէ բաժնէվճար, անկասկած, փոքր բացառութեամբ, Բաքխանի-Սաբունչիի բոլոր նաւթահանքերը պէտք է դադարեցնեն իրանց գործը։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 2-ին տեղիս հայ-կաթոլիկների եկեղեցում քաղաքի հայ լուսաւորչական երիտասարդութիւնը կատարեց հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ ի յիշատակ հ. Ղեւոնդ վ. Ալիշանի։ Եկեղեցում դրված էր դիազարդը, ծածկված շուրջառներով, որոնց վրա դրված էին վարդապետական թագը եւ գաւազանը, այլ եւ մեծ մատենագիր հ. Ալիշանի մեծագիր պատկերը, զարդարված ծաղիկներով եւ մի պակ այս մակագրութեամբ. «Անմահ հայրենասէր հայր Ղեւոնդ վ. Ալիշանի յիշատակին Ալէքսանդրոպոլի համակրողներից։ «Պատարագիչ հ. Պողոս վ. Նահապետեան խօսեց երախտագիտութեան մասին եւ գովեց երիտասարդների գործը, որ էր զուտ երախտագիտութիւն դէպի հ. Ալիշանի գործը, որ 60 տարի ծառայել է հայ ազգի գրականութեանը։ Հոգեւորական դասը կատարեց հոգեհանգստի կարգը, որի միջոցին ուսուցիչ պ. Յովհաննէս Կոստանեան մի գեղեցիկ ճառով բացատրեց ժողովրդին թէ ով էր հ. Ալիշան։ Ապա խօսեց պ. Յարութիւն Զաքարեան եւ վերջը խօսեց Պետրոս Բէյբուրեան։ Այս էլ աւելացնենք, որ քաղաքի բնակիչներից ամենաընտիր մասը ներկայ էր հանդիսին, ինչպէս, օրինակ, քաղաքագլուխը, իր օգնականները, ճայնաւորներից շատերը, ուսուցիչները, վաճառականները, նաեւ բազմաթիւ համակրողներ։ Հոգեւորականներից ոչ ոք չը կար։ Երեւի մեր արժանապատիւ հայրերը մի բուբլին աւելի կը նախադասեն, քան հայր Ալիշանի յիշատակը»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ամսոյս 4-ին, երեկոյեան 6 ժամին, Հրդեհ ծագեց Բիբիօվսկի Նաւ Իզրաելսոն ընկ. կերոսինի գործարանում, Սեւ քաղաքում։ Վնասը դեռ չէ որոշված, բայց կարծում են, որ մեծ պէտք է լինի։ Վերջին ժամանակներս յաճախ տեղի ունեցող հրդեհները այնքան վնաս պատճառեցին կրակից ապահովող ընկերութիւններին, որ ոչ մի ընկերութիւն այլ եւս չէ համաձայնվում ապահովելու ոչ մի նաւթահանք, չը նայած այն բանին, որ հազարին վերցնում են 70 ռուբլի»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի Կարզախ գիւղից մի աղջիկ, Վարդանոյշ Հողմբկեան Յ. նոյն գիւղացի Հեւոն Դեմուրչեան փոխադարձ սիրահարված են լինում միմեանց վրա, բայց աղջկան, նրա կամքի հակառակ, նշանում են մի ուրիշ կուրզախցու, Վարդան Դօխոյեանի հետ, որը ծախսեր է անում այդ առիթով։ Աղջիկը չէ կարողանում հաշտվել այդ իրողութեան հետ. սակայն նշանված Դօխոյեան իր կողմնակիցներով աշխատում են իրանց նպատակին հասնել՝ նամուսի կամ արած ծախսերի համար. աղջկայ հայրը նոյնպէս աշխատում է չը սիրած մարդուն տալ նրան՝ ծախսերը չվերադարձնելու պարտականութիւնից ազատվելու համար։ Դրութիւնը վտանգաւոր է լինում, որովհետեւ Դօխոյեանի կողմնակիցները աւելի ուժեղ են եւ նրանք կարող էին բռնի ոյժ գործադրել։ Եւ տխուր աղջիկն ու իր սիրած երիտասարդը, այդ վտանգից ազատ մնալու համար, վճռում են դիմել դրական միջոցի։ Աղջիկը՝ երիտասարդի եւ նրա ազգականների հետ՝ մի գիշեր դալիս են Ախալքալաք, մի ծանօթ անձի տուն, եւ միւս օրը անմիջապէս դիմում են հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչ գործակալ վարդա-

պեին։ Վերջինս՝ հարց ու փորձ անելով աղջկան՝ հասկացուած է, որ նրա կամքի հակառակ են նշանել. այդ պատճառով գործակալը հրամայում է պահել աղջկան իր ուղած երիտասարդի հետ»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 1-ին դերասան Գալֆայեանը, դերասաններ Միրզոյեանի, Բաբուրեանի եւ տեղական տիրողների մասնակցութեամբ, քաղաքային կլուբի դահլիճում խաղաց Շեքսպիրի յայտնի «Համլէտը»։ Հասարակութիւնն այս անգամ շատ լաւ վերաբերվեց ներկայացման։ Ներկայացման երեկոյին ահագին բազմութիւն կար թատրոնում եւ տեղերը ոգեւորված ծափահարում էին դերասանին։ Ամսի 9-ին պ. Գալֆայեանը խաղալու է «Օտելլո»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 4-ին, մեր քաղաքում մի դժբաղդութիւն պատահեց։ Մի դուխոբոր վայր ընկաւ իր ֆուրգոնից, որի անիւները անցան նրա մարմնի վրայով ու ջարդեցին։ Խեղճը իսկոյն մեռաւ»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մի խումբ նաւթարդիւնաբերողներ սինդիկատ են կազմել եւ որոշել վաճառել կերոսինը 15 կոպէկից ոչ պակաս, բայց հազիւ թէ աջողվի այդ երազը։ Նաւթը ծախվում է 6 կոպէկով Բալախանիում։ Նաւթային սինդիկատը նշանակել է 6½ կոպ. եւ աշխատում է բարձրացնել մինչեւ 7 կոպէկ պուդը»։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Տեղական տիրողների խումբը մտադիր է դեկտեմբերի 9-ին տալ հայերէն մի ներկայացում։ Խաղալու են Գ. Սունդուկեանցի յայտնի «Գէյշոն» եւ մի վոդեվիլ»։

—

ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 24-ին եկաւ մեր վիճակի յաջորդ Սիսն վարդապետը եւ նոր նշանակված վանահայր Սահակ վարդապետ Բաղդասարեանցը։ Նոր վանահօրը յանձնված է հակել Գողթնեաց 8—9 վանքերի վրա ու քարոզել շրջակայ գիւղերում, մխիթարելով ժողովրդին։ Նոյն երեկոյին ահագին երիտասարդութիւնը, դիմելով հայր յաջորդին, խնդրեց հոգեհանգիստ կատարել հայր Դ. Ալիշանի յիշատակին, որը սիրով յանձն առաւ։ Միւս օրը, հոկտեմբերի 25-ին, եկեղեցին լիքն էր մեծ բազմութեամբ։ Երկսեռ դպրոցների տանները թարմ ծաղկի փնջերով հոգեհանգստի սեղանի վրա պատկ էին հիւսել՝ մէջն առած խաչն ու աւետարանը։ Պատարագից յետոյ հայր Սիսնը գեղեցիկ կերպով պատկերացրեց հանգուցեալի կեանքն ու գործունէութիւնը, որից յետոյ կատարվեց տովորական հոգեհանգստեան կարգը։ Երիտասարդութիւնը նոյն օրը Վենետիկի միաբանութեանը հեռագրով յայտնեց իր ցաւակցութիւնը՝ «Գողթանը ողբում է հայկական հնութիւնների անմահ երգչի, հայրենասէր Ալիշանի մահը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Միթվայիդայ, դեկտեմբերի 5-ին

«Կրօնամոլութիւնից հիւանդացածները» վերնագրով մի յօդուածում «Allgemeine Zeitung»-ը իր դեկտեմբերի 3-ի համարում հաղորդում է հետեւեալը։

Դաթէն գիւղի Կաչկէ ընտանիքը, գտնվելով կրօնական չափազանց էկզալտացիայի մէջ, նոյեմբերի 23-ից սկսած հետու էր պահում իրան ամեն տեսակ ուտելեղէններից։ Աղօթքներ մռմռալով եւ ապաշխարութեան երգեր հրգելով վազվզում էին այդ ընտանիքի անդամները մերկ, երբեմն տան մէջ եւ երբեմն տան առաջ, բակում։ Նրանց ընտանի կենդանիներին սովից ազատելու համար գիւղի տանուտէրը տարված էր երկու հարեւան համագիւղացիներին պարտաւորեցնել հերթով կերակրելու համար։

Գիւղացի Կաչկէ 52 տարեկան է եւ գիւղի մի գեղեցիկ մասի տէրականատէր։ Թէ նա եւ թէ նրա ընտանիքը համարված են որպէս խաղաղասէր եւ բարերար մարդիկ։ Նա իր տանից դուրս շատ քիչ է եղել. իր օրերը եւ ժամանակը անց է կացրել նա մեծ մատեանում «Darbysten» կոչված աղանդի շրջանում, որի ներկայացուցիչն էր։ Այս հաւատացեալները, որոնք գիւղական ընդհանուր եկեղեցուց առանձին են, ընդունում են, որ Քրիստոսի գալուստը մոտեցել է եւ դրա համար էլ հեռանում են աշխարհիս վայելչութիւններից։ Արդէն 25 տարի է, որ Կաչկէն պատկանում է այդ աղանդին։ Նրա ամբողջ ընտանիքը գտնվում էր նրա ազդեցութեան տակ. նրա կինը, որը համարեա մի եւ նոյն տարիքի մէջ էր, 19 տարեկան աղջիկը, 22 տարեկան տղան, աղախինը, մէկ ամուսնացած հարեւան տիկին եւ տիկին Երիմվից կազմում էին այդ ընտանիքը եւ յարգում էին Կաչկէին։ Սրանց օրինակին հետեւում էր նոյնպէս կէս տարի առաջ Ամերիկայից վերադարձած որդին, որը կրօնական պարտաւորութիւններին անբաւարար ժամանակցութեան համար փանատիկոսներից ծեծ ու նախատինք ուտելուց յետոյ, վճռեց այլ եւս գիշերը տանը չը քնել։ Իսկ տիկին Կրիմվից իր ամուսնուց բաժանվել էր նրա համար, որպէս զի կարողանայ իր կրօնական պարտաւորութիւնները ամենայն ճշգրտութեամբ կատարել։

Թէ ինչպէս եւ օրտեղից այս բոլորը յղացաւ, դժուար է ասել։ Նոյեմբերի 23-ից սկսած ամբողջ գիւղը գտնվում էր տարաբաժին տակ։ Երբ Կաչկէի տան պատի ժամացոյցը կանգնեց, տանտէրը յայտնեց, որ աշխարհիս վերջն արդէն մոտեցել է։ Այս յայտարարութեան հետեւանքն այն եղաւ, որ տիկին Կաշկէ սկսեց սուրճ պատրաստել եւ կարկանդակներ թխել տալ, որպէս զի վերջին անգամ մէկ էլ լինայ։ Սրանից յետոյ արդէն անմիջապէս սկսվեց մեծ ծոմապահութիւնը անընդհատ աղօթքների հետ։ Քաղցած, ջղային ատամոքը հետզհետէ օշնում էր նրանց մինչեւ խելագարութեան հասած դրութեանը՝ յափշտակվել բոլոր ծայրահեղութիւններով։ Կաչկէի ընտանիքը սկսեց, յանկարծ, մի աննկարագրելի հանդէսով գիւղում երեւալ։ Երբ լուզված ընտիկիները սկսեցին արգելել՝ նրանք պատասխանում էին հետեւեալը. «Մենք կը թռչենք դէպի առաջ, մենք հագած ունենք ամպերի քը զանցանման շորերը»։ Դիւրահար ընտանիքը յարձակվում էր իսկապէս գիւղացիների վրա եւ բռնութեամբ քաշելով նրանց դէպի տան բակը, ասում էր. «Դուք էլ պէտք է հրեշտակներ դառնաք», մինչեւ որ ոստիկանութիւնը օգնութեան հասաւ։

Թէեւ ամբողջ տունը գտնվում էր մշտական հսկողութեան տակ, բայց այնուամենայնիւ պահապանները փոխվելու ժամանակ տիկին Կաշկէն յանկարծակիօրէն է լինում։ Թաքնվող պահապանները գտնում են նրան միայն շապիկով յատակի վրա ընկած։ Շուտով գիւղում լուր է տարածվում, թէ այդ դժբաղդը միւսների հաբուռածներից է մեռել, իսկ ընտանիքի միւս անդամները, որոնք իսկոյն չը թաղեցին, ոչինչ չեն ասում այդ մասին։ Ոստիկանութիւնը յանձնարարում է մարմինը հետազօտելու եւ սկսում է աւելի ուշադրութեամբ հսկել այդ հոգեկան հիւանդների վրա։ Կազմված բժշկական ժողովը գտնում է, որ տիկին Կրիմվից ծոմով եւ ջղային գրգռումներով այնքան է յափշտակված եղել, որ կեանքի վտանգն անմիջապէս մոտ է եղել։ Երակը խփելուց երբեմն դադարելիս է եղել։ Հիւանդին ուղարկում են հիւանդանոց, որտեղ նրան յորդորներով եւ քարոզներով հանգստացնում են։ Ընտանիքի միւս մասը այսքանում իբր թէ առողջ էր երեւում, թէեւ հայրը իրան թոյլ էր զգում եւ անկողնից վերկենալ չէր կամենում։ Հարեւանները ժողովվելով դրեցին նրանց կառքի վրա եւ տարան մօտակայ կայարանը, որտեղից ուղարկվեցին Սօրաու գծատունը։ Կաշկէն եւ իր ընտանիքը բոլորովին առանձնատիրա էին վերաբերվում դէպի այս ամենը եւ ասում էին, որ արանով կատարվում է միայն Աստուծու կամքը եւ որ իրանք շուտով պէտք է վերադառնան։ Սօրաու հասնելուց յետոյ մեծ յօժարութեամբ սկսեցին ոտով մինչեւ գծատուն գնալ։

Բոլոր բժիշկները, որոնք միջոց ունեցան այս հոգեկան հիւանդ ընտանիքը քննել, անորոշ եզրակացութեան են հասել։ Երեւի, երկարատեւ հետազօտութիւններից եւ դիտելուց յետոյ կարելի կը լինի այս տարօրինակ դէպքը պարզել։ Այսքան, չատ անձնաւորութիւնների միաժամանակ խելագարվելը անհաւատալի է թւում։ Բժիշկները ընդունում են, որ ընտանիքի մէկ անհատի յիմար արարքները կարող են պատճառ եղած լինել այս թշուառ հետեւանքի, որովհետեւ այդ ժամանակ ծայրահեղութեամբ հիւանդատ մարդկանց մէջ նոյնանման գործողութիւնը առանձին դեր է խաղում։ Միջին դարերում, երբ պարամոլութիւնը ժողովրդի ընդհանուր հիւանդութիւնն էր, այնքան էին պարում, որ ուժասպառ եւ ուշագնաց էին լինում։ իրանց կրօնական ծէսերով զարհուրելի դէրվիշները պատկանում են նոյնպէս այս կարգին։ Մի եւ նոյն թշուառ օրինակին միացաւ նոյնպէս Դաթէն գիւղի Ֆանատիկոս ընտանիքը։

Ա. Յակոբեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նոյեմբերի 28-ին դիմադրական կուսակցութեան պարագլուխ Կէմպրէլ—Բաններման Դոնֆերմայնում (Շտայնդիայում) արտասանեց մի ճառ, որ նուիրված էր Անգլիայի այժմեան քաղաքական դրութեան։ Ցիշեցնելով, որ անցեալ տարվայ պարլամենտական ընտրութիւնները տարված էին կառավարութեան կողմից այն պատրուակով, թէ իբր անհրաժեշտ է անգլիական ժողովրդին հնարաւորութիւն տալ կարծիք յայտնելու հարաւ-աֆրիկական հանրապետութիւնների ապագայ կազմակերպութեան վերաբերմամբ, ճառախօսը հարցրեց. «Մօտեցել ենք մենք արդեօք որքան եւ թչէ խաղաղութեանը այս 12 ամիսների ընթացքում, որոնք անցել են ընդհանուր ընտրութիւններից յետոյ, կամ հարաւ-աֆրիկական հանրապետութիւնների ապագայ կազմակերպութեան հարցի լուծմանը։ Իրիտանական ազգը ծարաւի չէ ոչ աշխարհակալութիւնների, ոչ նոր երկրների գրաւման, ոչ փառքի եւ գերիշխանութեան, այլ հաստատուն եւ մեծահոգի խաղաղութիւն բոէրների հետ։ Բայց այժմ նա սկսում է կասկածել այն բանում, թէ լորդ Սալսբիւրիի քաղաքականութիւնը յիրաւի կարող է հասցնել մեզ այդ նպատակին։ Այն, ինչ որ անում է կառավարութիւնը, հազիւ թէ կարելի լինի քաղաքականութիւն անուանել, այլ կոյր եւ մեծամիտ յաժառութիւն։ Նա պահանջում է, որ բոէրները անպայման անձնատուր լինեն եւ այդ նպատակին հասնելու միջոցներ ընտրել է աւերածներ եւ ճնշումներ։ Կան պատերազմի մէջ նաւ միջոցներ, որ ոչ չը պէտք է դիմէ մի ժողովուրդ. միւսն դէմ՝ ուշադրութեան առնելով մարդասիրութեան տարրական պահանջները։ Այս տեսակ միջոցները միայն կարող են աւելի հեռացնել խաղաղութիւնը եւ քանդել ապա ներդաշնակութիւնը ու բարեացակամ յարաբերութիւնները երկու ազգերի մէջ հարաւային Աֆրիկայում։ Երբ մենք անարգում ենք կառավարութիւնը նրա խստասիրտ քաղաքականութեան համար, մեզ սկսում են մեղադրել, թէ մենք յարձակվում ենք մեր զինուորների վրա, զրպարտում ենք նրանց։ Բայց դրա ակներեւ ստութիւն է։ Զինուորները կատարում են իրանց գլխաւորների հրամանները եւ ես հաւատացած եմ, որ կատարում են զղջանքով։ Ոչ թէ մեր զինուորներն են զրկված մարդասիրութիւնից, այլ մեր քաղաքագէտները։ Նրանց նոր իմպերիալիզմը հեռու չէ գնացել հին բռնակալութիւնից, ինչպէս այդ ցոյց է տալիս Կապի գաղթականութեան մէջ սահմանադրութիւնը վերացնելու եւ պատերազմական տերրորով նրան փոխարինելու փաստը։ Իր ճառի վերջում Կէմպրէլ-Բաններման պրնդում էր, թէ անհրաժեշտ է յետ կանչել հարաւային Աֆրիկայից գերագոյն կոմիսար լորդ Միլնէրին եւ խաղաղութեան բանակցութիւններ սկսել բոէրների հետ։

—Ֆրանսիայի տարած անարիւն յաղթութեան առիթով Թիւրքիայում, Բուխարէստի «Ուղղափառ Արեւելք» անունով լրագրում տպվեց մի յօդուած՝ «Վատիկանի յաղթութիւնը ուղղափառ Արեւելքում» վերնագրով։ Այդ յօդուածի մէջ, ի միջի այլոց, կարդում ենք. «Հռոմէական-կաթոլիկները եւ բողոքականները Թիւրքիայում կարող են իրանց անպաշտպան չը համարել։ Ոչ Թիւրքերը, ոչ ալբանացիները, ոչ քիւրդերը չեն կարի նրանց գլխները, իսկ դրանք կարող են, վայրենի արնաուռների հետ միասին, ազատ եւ անպատիժ կոտորել եւ ապանել ուղղափառ սերբերին Հին Սարբիայում եւ յոյներին Ալբանիայում։ Կ. Պոլսում առաջնակարգ դեր են կատարում Գերմանիան, Աւստրիան, Ֆրանսիան, Իտալիան եւ մինչեւ անգամ Բոլգարիան։ Բ. Դուռը հաւատում է, որ Ռուսաստանը իր հետ բարեկամ է եւ Պետերբուրգ է ուղարկում արտակարգ դեսպանութիւն, որը պէտք է հաւատացնէ Ռուսաստանին, որ Բ. Դուռը մեղաւոր չէ սերբերի եւ հայերի կոտորածի մէջ, այլ դրանք իրանք են ալբանացիներին եւ քիւրդերին գրգռում եւ ջնջել տալիս իրանց։ Կասկած չը կայ, որ այդ դեսպանութիւնը ուղարկվում է Գերմանիայի խորհրդով։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի 5-ին իրաւագիտութեան Կայսերական ուսումնարանը տօնեց իր գոյութեան 66-րդ տարեդարձը։

ԲԵՐԼԻՆ։ Գրինց Հէնրիխ առաւօտեան եկաւ Նոր-Պալատը։ Առաւօտեան կայսրը ռուսաց Թագաժառանգի եւ պրինց Հէնրիխի հետ միասին գնաց Վիլդպարկ փատեան տրսալու։ Որից յետոյ Նոր-Պալատում տեղի կունենայ նախաճաշ։ Երեկոյեան կայսրը եւ ռուսաց Թագաժառանգը կը բարեհաճեն ներկայ լինել ճաշին ռուսաց դեսպանի մօտ։ Ուլանների գնդի գրնդապետ Գուստէդ ներկայացաւ կայսրին եւ ռուսաց Թագաժառանգին, որ այդ գնդի շէֆն է։ Երէկվայ ճաշի ժամանակ նոցա մեծութիւնները նստած էին իրար հանդէպ. կայսրի աջ կողմում տեղ էր գրաւել ռուսաց Թագաժառանգը։

ԲԵՐԼԻՆ։ Ռուսական դեսպանատան մէջ տեղի ունեցած ճաշին ներկայ էին ռուսաց Թագաժառանգը, Վիլհելմ կայսրը եւ ուրիշ անձինք։ Երեկոյեան 11 ժամին ռուսաց Թագաժառանգը ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։ Կայսրան գնալիս Նորին Կայսերական Բարձրութիւնը ուղեկցում էին կայսրը, պրինց Հէնրիխ եւ պրինց Էյտել-Ֆրիդրիխ։ Նորին Բարձրութիւն Թագաժառանգը գնում է գերմանական կայսրի սեփական գնացքով։ Կայսրը ռուսական դրագունների իր անուան գնդի հագուստով էր, իսկ ռուսաց Թագաժառանգը—պրուսական ուլանների իր անուան գնդի հագուստով։

ԿԱԼՈՒԴԱ։ Նահանգական զէմստվոյի ժողովը փակվեց։ Քննվեցին 150-ից աւելի զեկուցումներ։

ԵԿԱՏԵՐԻՆՈՍԼԱՎ։ Դեկտեմբերի 4-ին գումարումը վերջացրեց 1902 թուականի նախահաշիւի հաստատութիւնը։ Ամբողջ ծախքը 962,000 ռուբլի է, որից ժողովրդական լուսաւորութեան համար նշանակված է 176,000 ռ., բժշկական մասի համար—118,000 ռուբլի, քաղաքի բարեկարգութեան համար—172,000 ռուբլի եւ նոր շինութիւնների համար—100,000 ռուբլի։

ՎԻԼՆՕ։ Միջնակարգ դպրոցների ուսուցիչներից բաղկացած մի խումբ, ուսումնարանական շրջանի հոգաբարձու Գավլովի ձեռներէցութեամբ, բացեց երեկոյեան հրապարակական դասընթացներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի 4-ին։ Բօրսա։ «Ա. Ի. Մանթաշեւ» նաւթարդիւնաբերական եւ առեւտրական ընկերութեան բաժնեթղթերով կատարված են 147 ձանր առուծախներ։ Գուրայիսի եւ Թիֆլիսի հողային բանկերի գրաւաթղթերը չէին ժամանվում բորսայական գների ցուցակների մէջ։

6 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է հետեւեալ Բարձրագոյն ուկազը Կայսրուհի Մարիայի հիմնարկութիւնների ինամակալական խորհրդին. «Ցանկանալով մի հանրօգուտ գործով յաւերժացնել Մեր ամենասիրելի Քոյր Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի պատկառելի թանկագին դէպքը, Մենք բարեաջ համարեցինք հիմնել Վօրոնէժ քաղաքում եւ յանձնել Նորին Բարձրութեան Օգոստափառ հովանաւորութեանը ազնուական օրիորդների ինստիտուտը։ Այդ հիմնարկութեան, որը պէտք է կառուցվի 250 ձրիավարժ եւ 60 թոշակառու օրիորդների համար, նպատակը պէտք է լինի կրթութիւն տալ Վօրոնէժի նահանգի եւ Եւրոպական Ռուսաստանի միջին եւ հարաւային մասերի այլնահանգների ազնուականների աղջիկներին, առաւելապէս որբերին եւ կէս-որբերին, որպէս զի նրանց միջոց տրվի ընտանիքի օգտակար անդամներ դառնալու, եւ ուսուցանելու նրանց, բացի լիակատար ընդհանուր ինստիտուտական դասընթացքից, այնպիսի գործնական գիտութիւններ, որոնք կը կարողանային տալ ինստիտուտի աշակերտուհիներին ազնիւ աշխատանք, եթէ նրանց կը վիճակվի ապրել սեփական աշխատանքով։ Նիկոլայ»։

Հրատարակված է զինուորական վարչութեան. «Անընդհատ հոգածութիւն ունենալով այն զինուորականների ընտանիքների կարիքների մասին, որոնք իրանց արիւնով կնքել են իրանց հաւատարմութիւնը գահին եւ հայրենիքին, Թագաւորը բարեհաճեց շնորհել իր ողորմութեան շնորհի նոր նշանը, հրամայելով կատարել միանուագ նպաստների տալը հեռու Արեւելքում վէրքերից ապաված, մեռած ու կորած զինուորականների ընտանիքներին»։—Թագաւոր Կայսրը, անընդհատ հոգ տանելով օֆիցէրների ծանր եւ անընդհատ աշխատութիւնները թեթեւացնելու մասին, Բարձրագոյն հրամայեց հաստատել զինուորական խորհրդի քննած նախագիծը, որի համաձայն ընդարձակվում են օֆիցէրների իրաւունքները՝ արձակուրդներ ստանալու ոչ միայն ընտանեկան գործերը կարգադրելու եւ հիւանդութիւնները բժշկելու համար, բայց եւ հանգստանալու համար տարվայ բոլոր ժամանակներին»։

ԼՕՆԴՕՆ։ Մոսքվիդեան կենտրոնական շուկան տեսնելուց յետոյ ռուսաց գիւղատնտեսների ընկերութեան պատուիրակները գնացին Հիլդհոլ, ուր շուկայի կենտրոնական մասնաժողովը նախաճաշիկ էր պատ-

բատել հին բատուշայի մէջ։ Նախագահում էր ժանտաժողովի նախագահ Մուէն։ Թագաւորի եւ Ռուսաց Կայսրի պատին առաջարկված կենացներից յետոյ, նախագահն առաջարկեց կենաց ի պատիւ «մեր ռուսաց հիւրերի», մի եւ նոյն ժամանակ ժանտագոյց արեց, որ Ռուսաց Թագաւորը վայելում է ամբողջ Եւրոպայի սէրը, շնորհիւ իր խաղաղասէր տենդենցիաների, որոնց տարածելով նա հարթեց ճանապարհ եւրոպական խաղաղութեան համար։ Առանձին շնորհակալութիւններ յայտնեց նա ռուսաց ֆինանսների մինիստր Վիտտէին նրա բարի խօսքերի համար Անգլիայի վերաբերմամբ։ Մեզ շատ հարկաւոր է բարեկամական յարաբերութիւններ պահպանել Ռուսաստանի հետ, մենք կամենում ենք նպաստել կենսական մթերքների ներմուծման աշխարհի բոլոր մասերից, մանաւանդ Ռուսաստանից։ Աջողութեամբ մրցելու համար, ներմուծված ապրանքները պէտք է լաւ յատկութիւն ունենան։ Մուէնի խօսքով, նա լսել է, որ մեծ քանակութեամբ անգլիական եղներ են գնվում ռուսաց անասունները բարւոքելու համար։ Կրիւկով, որ խօսում էր անգլիերէն, այն մտքը յայտնեց, թէ հարկաւոր է, որ ռուսները եւ անգլիացիները այցելեն միմեանց, որպէսզի միմեանց լաւ ճանաչեն։ Մօտ է այն ժամանակը, երբ ռուս արտադրողները ձեռք կը մեկնեն անգլիական սպառողներին։ Ապա Կրիւկով. Մոսկվայի կալուածատէրերի ընկերութեան անունից, Մոսկվա հրաւիրեց ներկայ եղողներին։ Գատուիրակները ճանապարհ կրնկնեն ուրբաթ երեկոյեան։

ԼՕՆԴՕՆ։ Ի նկատի առնելով այն, որ գոյծերի դրութիւնը հարաւային Աֆրիկայում բարդացաւ, կառավարութիւնը դիտաւորութիւն ունի յունվարի մէջերին ուղարկել այնտեղ հազար մարդուց աւելի զվարդիական բրիգադա։

ԲԵԼԳՐԱԴ։ Նախկին մինիստր-նախագահ Վլադան Ջորջեվիչի որդին, մինիստրութեան քարտուղար Ալէքսանդր Ջորջէվիչ, փողոցում վիրաւորանք հասցրեց՝ խփելով դաւանութիւնների մինիստր Գավէլ Մարինկովիչին, որը մի քանի անգամ հրապարակորէն վիրաւորել էր իր հօրը։ Մարինկովիչ երկու անգամ ատրճանակ դատարկեց, բայց չը դիպաւ Ջորջեվիչին։ Ատրճանակի գնդակները դիպան մօտերքը անցնող մի տղային, որը ծանր կերպով վիրաւորվեց։

ՆԻԻ-ԵՕՐԿ։ Սենատին առաջարկվեց մի օրինագիծ, որի հիման վրա գաղթականները կենթարկվեն քննութեան՝ նրանց կրթութեան ատիճանը որոշելու համար եւ կը հիմնվեն տեսուչների պաշտօններ՝ դօկու�էնտները տեսնելու համար, որպէս զի չը թոյլ տան անիշխանականներին մտնել Միացեալ-Նահանգները։

ԼՕՆԴՕՆ։ Կրոյցինգէրին գերի վերցնելու ատիթով «Ռէյտերի գործակալութիւնը» հաղորդում է Միդլբուրգից (Կապի կոլոնիայում). դեկտեմբերի 2-ին Կրոյցինգէր Կապի գաղթականութեան 150 ապատամբների հետ Կոլոբէրգի մօտ անցաւ Սրանժեան գետը, դիմեց դէպի Կապի գաղթականութիւնը եւ աշխատում էր անցնել երկաթուղիական գիծը Հաննովէր եւ Տէլբօա կայարանների միջեւ։ Բլոկհաուզներից նրանց վրա բացվեց մի զօրեղ կրակ. Կրոյցինգէր եւ 5 հոգի բօէրներ վիրաւորված են եւ գերի են վերցված։

ԷԻԵՎ։ Գոլիտեխնիկական ինստիտուտի հանդիսաւոր օծումը մատդրութիւն կայ կատարել գարնանը։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Սկսվեցին հում ապիրատ հայթայթելու աճուրդները գինու մենավաճառութեան համար եկող տարում։ Աճուրդին մասնակցում են զանազան նահանգների մօտ հարիւր օղեհանութեան գործարաններ։

ՎԱՐՇԱՎԱ։ Մի ամսվայ ընդհատումից յետոյ վերակսվեց «Варшавская Газета» լրագրի հրատարակութիւնը, որ գոյութիւն ունի 128 տարի։—Այստեղի ցէմէնտ պատրաստող գործարանները միջնորդում են արտասահմանի ցէմէնտի մաքսահարկը բարձրացնելու մասին, Ռուսաստանում չափից դուրս շատ ցէմէնտ պատրաստելու պատճառով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա. Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նուասարդեանց—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Ն. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ն. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Թարանտասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ն. Ն. Ռուսամբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մարթու հ.
Ա. Ն. Շապկովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ), վենէր. և մարթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նուասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախարհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Գ. Տ. Առվանիսեանի—տանը, ծաղկեհատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս

ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Озріевская ул., д. 12.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

տեղեկացնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ Վարչութեան դիրեկտոր Վասիլի Իվանովիչ Կօրգանովի մահուան պատճառով, նրա պաշտօնը, Ընկերութեան կանոնադրութեան հիման վրա, ոտանձնեց ընտրութեամբ աւագ կանդիդատ, Գասպար Եգորովիչ Թաթուզով։ 1—1

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԻՐ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочные) եւ այլ տեսակ գեոդեզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գընահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դվօրցովայա Նովէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։ 36—100

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուրլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԴՋՈՑ

մազերը բուսացնելու եւ ամրացնելու համար, աչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒՏ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ ապիտակութիւն տալու համար, աչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ ապիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ արուակը, արկղիկի մէջ, 2 բուրլի, փոքրը—1 ր. 50 կ. Ստացվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագում. նոյնը Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատով։ 9—100

ՀՐԱՒԷՐ

Այսու յայտնվում է հրաւիրվում են Զրկիենանց ս. Կարապետ եկեղեցու բարեպաշտ ծխականները յիշեալ եկեղեցին, ամսի 9-ին, առաջիկայ կիրակի, ս. պատարագից յետոյ, 12 ժամին, երէցփոխի նոր ընտրութիւն կատարելու յիշեալ եկեղեցու համար։

Գործակալ ա. ժ. եկ. հայոց Թիֆլիսի՝
Զաքարիա քահանայ Զարդեղեանց
1—2

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն ժողովրդականների, թէ քաղաքիս Վանքի աւագ եկեղեցու նորոգութիւնը աւարտված է եւ ամսի 9-ին, կիրակի օրը, կը կատարվի ս. օծումն, իսկ շաբաթ երեկոյեան, ժամը 4-ին, հանդիսաւոր թափոր կը լինի եւ ժամատացութիւն։

Երէցփոխ Վանքի աւագ եկեղեցու՝
Իսահակ Բաւդանեան
1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, դեկտեմբերի 8-ին,

նշանակված է

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

սովորական կարգով։

(դ. 6 եւ 8) 2—2

ՅՈՎԱԿԻՄ ՄԱԼՈՒՄԵԱՆՑԻ

ԲԱՂԴԱԴԻ ԹԵՐԱՄԻ ՍԵՐՄ

ՊԱՏՐԱՍՏԱԾ ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ

Целлюлярная грена, приготовленная посистемѣ Пастера.

Կարելի է դիմել՝ Тифлисъ, Лорисъ-Меликовская ул. д. № 11. Галустъ Галустянцъ. կամ Черезъ Ордубатъ, село Мегры, Іоакиму Малумянцу. (2) 14—15

ՈՍԿԵԳՈՑՆ ԵՒ ԱՆՈՒՇԱՀՈՑ

ՄԵՂՐ

Ա. ՄԻՐԹԱՐԵԱՆԻ ՄԵՂՈՒԱՆՈՑԻՑ

Ծախվում է Լերմոնտովսկայա փողոցում, Տէր-Միքայէլեանի № 3 տանը, Աբաս-Աբադակայա հրապարակի մօտ, մուտքը գաւթից. բարձրանալ ձախակողմեան վերնայարկը։

Մեղրի պուդը—9 բուբլի, ֆունտը—25 կոպէկ։
Առաւօտ. ժամը 8-ից մինչեւ 11-ը,
Երեկոյ. ժամը 4—ից մինչեւ 7-ը։

Հաֆթվանի, Խոյի, Սահլումի եւ Փայաջուկի դպրոցների համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԻ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ.

որոնք պէտք է աւարտած լինեն մեր թեմական դպրոցներում. նախապատուութիւնը տրվում է Գէորգեան ճեմարանի եւ Ներսիսեան դպրոցի աշակերտներին։ Ներկայ ուսումնական տարվայ համար ստան դու են 159-ական թուման (300 բուբլի) առանց ճանապարհածախսի։

Դիմել՝ պ. Համբարձում Առաքելեանցին, «Մշակի» խմբագրատանը։ 3—3

ԳՈՒՏՏԻՆԲԻՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

«Ծոցի Բառարան Ռուսերէնից—Հայերէն 6000 ռուս ամենագործածական բառերի», կազմեց Ց. Ա. Դինն է 30 կոպ., կազմած 45 կոպ.
«Գաստռ-Քաթիպայի բանաստեղծութիւնները», երրորդ տպագրութիւն, գինն է 50 կոպ.
«Ոգնիներ», մանկական պատկերազարդ գիրք, գ. 8 կ.
«Կերակուր պատրաստելու ձեռնարկ խոհանոցը եւ իր կարգ ու սարքը», կազմեց տ. Վ. Ռոտինեան, գ. 1 ր.
«Բազմավէպի» բաժանորդագրութիւնն է 4 ր.
«Գնդունիի» բաժանորդագրութիւնն է 1 ր. 50 կ..
«Բանասէրի» բաժանորդագրինը 6 բուբլի։
«Բազմավէպ» եւ «Գեղունի միասին 4 ր. 50 կ.
Ռուսերէն Սեղանի եւ Գատի օրագոյցներ տախտակներով 20—80 կոպ. հատը.
Հայերէն Գատի եւ Ծոցի օրագոյցներ։
«Գուգարաց Աշխարհ», ստէրէօսկոպիկ պատկերների ժողովածու, 48 հատ 11 ր.
Ստէրէոսկոպներ հատը 4—5 ր.
Սիրանոյշի լուսանկար պատկերը հաւէտի զանազան դերերում հատը 30 կ.

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ Гуттенбергъ. Г. Галустяну, Лорисъ-Меликовская ул. № 11։ 1—3

Ընկերութիւն

ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.

Հնտրոզներ

ԾԱՂԿԱՅԻՆ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆԻ

Ամենալաւ յատկութիւնով

Զանազան հոտեր

1—10



Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԻԱՆ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաջարկում է թարմ կարամէլ մրգեղէնից, մօնպանսէ, մարմելատ, պաստիլա, զէֆիր եւ այլն։

Պատուէրներով դիմել գործարան. Պավլովսկայա փողոց, սեփական տուն, տելէֆոն № 362.

Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տելէֆոն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլոնիական խանութներում։

Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամսարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։

99—100

Дозволено Цензурою, Тифлисъ, 7 Декабря 1901 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва. Ц.-Вянская ул.